"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 2055-Ա

«15» դեկտեմբերի 2025 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 1904-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ 2025 թվականի դեկտեմբերի 17-ի, ժամը՝ 11:00-ին նվագախմբի տրոմբոնահարները լինելու են նախապես նշանակված մաէստրո Հ. Չեքիջյանի հետ նվագախմբային փորձին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 3-րդ մասով, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 18.1-ին հոդվածով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 2377-Ա/2 հրամանով և ՀՀ մշակույթի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի, Թատրոնի տնօրենի 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1904-Լ հրամանի 7-րդ կետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Թատրոնի տնօրենի 2025 թվականի նոյեմբերի 14-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության նվագախմբի շեփորահարների զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգման (մասնագիտական որակական քննությունների անցկացման) մասին» թիվ 1904-Լ հրամանի, այսուհետ՝ Հրաման, 1-ին և 6-րդ կետերում «2025 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը՝ 11:00» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը՝ 10:00» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Թատրոնի տնօրենի առաջին տեղակալ Կարինե Կիրակոսյանի վրա:

3. Թատրոնի նվագախմբի վարիչին՝ սույն հրամանի մասին պատշաճ ծանուցել Թատրոնի նվագախմբի այն երաժիշտներին, ովքեր սույն հրամանի համաձայն պետք է անցնեն զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգում, ինչպես նաև նրանց նախապատրաստել զբաղեցրած պաշտոնին համապատասխանության ստուգմանը:

4. Թատրոնի հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

Հիմք՝ Թատրոնի նվագախմբի վարիչ Է. Զախարյանի 2025 թվականի դեկտեմբերի 15-ի զեկուցագիրը:

Թատրոնի տնօրեն՝ Կ. Դուրգարյան
ք. Երևան
«15» դեկտեմբերի 2025 թ.